

Տնտեսական համագործակցությունն Իսրայելի և Ադրբեջանի միջև

Տնտեսական համագործակցության բնագավառում Ադրբեջանի և Իսրայելի միջև հարաբերությունները զարգանում են բավականին արագընթաց տեմպերով, հատկապես, վերջին տարիների ընթացքում: Երկու երկրների միջև միջպետական համագործակցությունը սկսվում է դիվանագիտական հարաբերությունների հաստատմանը զուգահեռ⁹: Իսրայելական բիզնեսը և հրեական ծագմամբ բիզնեսմեները բավականաչափ ներգրավված են Ադրբեջանի տեղեկատվական տեխնոլոգիաների, գյուղատնտեսության, արդյունաբերության, բարձր տեխնոլոգիաների, ենթակառուցվածքների բնագավառներում: Դրան է նպաստում նաև Իսրայելի արտաքին գործերի նախարարության միջազգային համագործակցության կենտրոնի (ՄԱՇԱՎ) ծրագրերի իրականացումը, որոնք հիմնականում առնչվում են վերոհիշյալ բնագավառներին: Ակնհայտ է, որ իսրայելա-հրեական բավականին մեծ ֆինանսական միջոցներ են ներգրավված Ադրբեջանի տնտեսության գրեթե բոլոր հատվածներում:

Ադրբեջանի և Իսրայելի միջև ապրանքաշրջանառությունը 2006թ կազմել է մոտ \$700 մլն:

Ադրբեջանի հիմնական առևտրային գործընկերները 2006 թ. (հզր. ԱՄՆ \$)¹⁰

Երկիր	Ապրանքա- շրջանառություն	%	Ներկրում	%	Արտահանում	%	Առևտրային բալանս
Ընդամենը	11639796,5	100,0	5267639,5	100,0	6372157,0	100,0	1104517,5
Իտալիա	2970011,1	25,5	124602,9	2,4	2845408,2	44,7	2720805,3
Ռուսաստան	1525843,5	13,1	1181584,1	22,4	344259,4	5,4	-837324,7
Թուրքիա	773185,0	6,6	385040,2	7,3	388144,8	6,1	3104,6
Իսրայել	711008,6	6,1	26179,7	0,5	684828,9	10,7	658649,2
Մեծ Բրիտանիա	459361,0	3,9	453764,6	8,6	5596,4	0,1	-448168,2
Գերմանիա	412843,2	3,5	403838,5	7,7	9004,7	0,1	-394833,8
Ֆրանսիա	403340,8	3,5	55837,4	1,1	347503,4	5,5	291666,0
Իրան	381819,0	3,3	85917,4	1,6	295901,6	4,6	209984,2
Թուրքմենստան	378532,1	3,3	369007,2	7,0	9524,9	0,1	-359482,3

⁹ Ադրբեջանի և Իսրայելի միջև դիվանագիտական հարաբերությունները հաստատվել են 1992թ. ապրիլին: Նույն թվականին բացվեց Իսրայելի դեսպանատունը Բաքվում, սակայն Իսրայելում Ադրբեջանի դեսպանատան բացման հարցը մնում է երկու երկրների միջև հարաբերությունների օրակարգի ամենակարևոր հարցերից մեկը:

¹⁰ Տյալները վերցված են Ադրբեջանի վիճակագրական գործակալության պաշտոնական կայքից՝ <http://www.azstat.org/publications/azfigures/2006/cn/index.shtml> (1.07.2008)

Ուկրաինա	355915,9	3,1	317512,3	6,0	38403,6	0,6	-279108,7
Վրաստան	334477,3	2,9	49201,8	0,9	285275,5	4,5	236073,7
ԱՄՆ	289842,4	2,5	197949,0	3,8	91893,4	1,4	-106055,6
Ղազախստան	232908,0	2,0	127252,0	2,4	105656,0	1,7	-21596,0

Տարեցտարի ավելի է մեծանում Իսրայելի պահանջը այնպիսի էներգակիրների նկատմամբ, ինչպիսին են նավթն ու գազը: Իսրայելական կառավարությունը մշտապես աշխատանքներ է տանում այս երկու հիմնական էներգակիրների նոր աղբյուրների և նանապարհների հայթայթման ուղղությամբ:

Այսօր Իսրայելը նախկին Խորհրդային Միության երկրներից օրական ներկրում է մոտ 300.000 բարել նավթ, որի հիմնական մատակարարներն են Ռուսաստանը և Ադրբեջանը: Վերջինն ապահովում է Իսրայելի նավթի մատակարարման շուրջ 20%: Ներկայում Իսրայելը հանդիսանում է ադրբեջանական նավթի երկրորդ ներկրողը՝ Իտալիայից հետո:

2006թ. հուլիսին Ադրբեջանում էր գտնվում Իսրայելի ազգային ենթակառուցվածքները համակարգող նախարար Բ. Բեն-էյլեզերը, որի այցելության հիմնական նպատակն էր համաձայնություններ ձեռքբերել ադրբեջանական նավթն իսրայելական երկու վերամշակման գործարաններ մատակարարելու համար, ինչպես նաև ադրբեջանական նավթի համար տարանցիկ երկիր դառնալու իրավունք ստանալ: Գործարքի առաջին մասի վերաբերյալ բացասական արձագանքների բացակայությունը թույլ է տալիս ենթադրել, որ այն հաջողությամբ է պսակվել, իսկ ինչ վերաբերում է իսրայելական տարածքով ադրբեջանական նավթի տեղափոխմանը, ապա այս նախագծի շատագուցակները առաջարկում են ֆանտաստիկ պլան, որն իրականում խայծ է ադրբեջանական կողմի համար:

Համաձայն նախագծի՝ իսրայելական կողմը առաջարկում է կառուցել ստորջրյա խողովակաշար թուրքական Ջեյհանի և իսրայելական Աշկելոնի միջև, որը հնարավորություն կտա երկարացնել Բաբու-Ջեյհան նավթամուղը մինչև Իսրայել, որտեղ առկա ենթակառուցվածքների միջոցով, մասնավորապես գոյություն ունեցող Աշկելոն-էյլաթ նավթամուղով¹¹, ադրբեջանական նավթը կտեղափոխվի Կարմիր ծով, իսկ այնտեղից էլ տանկերների միջոցով դեպի հնդկական և ասիական շուկաներ:

Ենթադրյալ Բաբու-էյլաթ նավթամուղը ունենալու է մոտ 2.500 կմ երկարություն: Ֆինանսական ծախսերի ծավալների մասին տվյալները դեռևս բացակայում են, սակայն արդեն իսկ

¹¹ Այս նավթամուղը կառուցվել է դեռ 1970-ականներին շահական Իրանի և Իսրայելի միջև ձեռքբերված համաձայնության արդյունքում, որով պարսկական նավթը պետք է առավել դեպի Միջերկրական ծով և այնտեղից էլ դեպի արևմուտքի երկրներ:

պարզ է, որ բացի Ջեյհան–Աշկերոն հատվածի կառուցումից¹² ֆինանսական միջոցներ են անհրաժեշտ նաև արդեն իսկ գոյություն ունեցող Աշկերոն–էյլաթ խողովակաշարը վերակառուցելու և վերազինելու համար: Երկրորդ կարևոր հարցը վերաբերում է Բաֆու–Ջեյհան նավթատարի տարողունակությանը, որն, ըստ էության, դեռևս չբավարարելով արևմտյան շուկայի հիմնական սպառողների պահանջները՝ դժվար թե կարողանա նավթի անհրաժեշտ ծավալ մատակարարել Իսրայելին հետագա տեղափոխման համար:

Փորձագետները, անվտանգության նկատառումներից ելնելով, տարակարծիք են այս նախագծի վերաբերյալ: Անհուսալի համարելով ադրբեջանական նավթի մատակարարումը՝ այլընտրանքային է համարվում ղազախական նավթային և գազային պաշարներից¹³ օգտվելու հնարավորությունը: Կարելի է ենթադրել, որ վերջին տեսակետը ակտիվորեն հրահրվում է «Գազպրոմ»-ի կողմից, քանի որ բխում է նրա շահերից: Ծրագրի իրականացման դեպքում ենթադրվում է ղազախական գազը¹⁴ Իսրայել հասցնել «Գազպրոմ»-ի խողովակներով («Միջին Ասիա–Կենտրոն»), «Սոյուզ» և «Երկնագույն հոսք» խողովակաշարերով):

Ադրբեջանական նավթի ներմուծման հակառակորդների համար փաստարկ է ծառայում այն հանգամանքը, որ Ադրբեջանը գտնվում է մշտապես լարվածության կենտրոնում հայտնվող Իրանի հարևանությամբ, իսկ իրավիճակը Վրաստանում այդքան էլ կայուն չէ:

Չնայած այս ամենին Բաֆու–Ջեյհանը գործում է և նավթ մատակարարում նաև Իսրայելին¹⁵, իսկ ղազախական էներգակիրները մատակարարող ենթակառուցվածքներին միանալը դեռ մնում է նախագծային մակարդակում: Պետք է նշել, որ այս երկու ծրագրերի իրականացման հեռանկարներով չափազանց մեծ հետաքրքրություն է ցուցաբերում նոր ֆաղափական ուժի հավակնող Ա. Լիբերմանի և նրա համախոհների թիմը, ինչը հնարավորություն է ընձեռելու ամրապնդել իրենց ֆինանսական դիրքերը: Այդ են վկայում նաև վերջին շրջանում ակտիվացած հասարակական և միջպետական շփումները Իսրայելի և Ադրբեջանի միջև: Այս տարվա ապրիլի 12-ին հիմնվել է «Ադրբեջան – Իսրայել» Միջազգային ասոցիացիան¹⁶, որի անդամները հիմնականում հանդիսանում են Ադրբեջանի հրեական համայնքի ներկայացուցիչները, ինչպես նաև Ադրբեջանից Իսրայել տեղափոխված հրեաները, որոնք Իսրայելի կառավարման համակարգում բավականին ծանրակշիռ դեր են կատարում: Այս կառույցը գլխավորում է նախկին բաֆվեցի, ներկայում Ա. Լիբերմանի «Մեր

¹² Ջեյհանի և Աշկերոնի միջև հեռավորությունը կազմում է մոտ 600 կմ:

¹³ Ղազախստանը այսօր արտադրում է օրեկան ավելի քան 1.5 մլն բարել նավթ, իսկ կանխատեսումների համաձայն՝ 2015թ Ղազախստանը կգերազանցի այնպիսի նավթ արտադրող երկրներին, ինչպիսին են Իրանն ու Կատարը:

¹⁴ Ղազախական նավթը ենթադրվում է հասցնել ռուսական Նովոռոսիյսկ, այնտեղից էլ նավերով թուրքական Սամսուն, ապա խողովակաշարով մինչև Ջեյհան, իսկ այնտեղից էլ կամ նավերով, կամ ստորջրյա խողովակաշարով դեպի Աշկերոն:

¹⁵ 2006թ օգոստոսի 25-ին Իսրայելը ստացել է ադրբեջանական նավթի առաջին մասնաբաժինը Բաֆու–Ջեյհան խողովակաշարով:

¹⁶ Այս հասարակական կազմակերպությունը յուրատեսակ կառույց է: Այն փորձում է ապահովել երկու երկրների ֆաղափական վերնախավի միջև ինֆորմացիայի փոխանակումը, որը, ըստ էության, իրականանում է:

տունն Իսրայելն է» կուսակցության ցուցակներով ընտրված Կնեսետի պատգամավոր՝ Յ. Շագալը¹⁷, որը նաև ներգրավված է Կնեսետի «Ներգաղթի, վերաբնակեցման և սփյուռփի հարցերով» և «Կրթության, սպորտի և մշակույթի» հանձնախմբերի աշխատանքում:

Իսրայելի ազգային ենթակառուցվածքները համակարգող նախարարի Ադրբեջան վերջին այցի ժամանակ սկզբունքային համաձայնություն է ձեռքբերվել նաև Բաֆու-Թրիլիսի-Էրզրում գազատարով Իսրայել գազ մատակարարելու վերաբերյալ: Այս ծրագիրն իրականացնելու համար պետք է կառուցվի Էրզրում-Ջեյհան հատվածը, իսկ այնտեղից՝ անդրծովյան խողովակաշար: Այլընտրանքային է դիտարկվում գազը նավերով իսրայելական Աշկելոն տեղափոխելու տարբերակը, սակայն այս տարբերակի պարագայում անհրաժեշտ է լինելու գազի վերամշակման գործարան կառուցել Ջեյհանում:

Այսօր Իսրայելը տարեկան օգտագործում է 1.7 մլրդ մ³ բնական գազ, սակայն հաշվարկները ցույց են տալիս, որ 2015թ այս էներգակիրի պահանջարկը ավելի է մեծանալու՝ հասնելով 8 մլրդ մ³, իսկ 2025թ՝ 24 մլրդ մ³: Արդյունաբերության կողմից գազի հիմնական սպառողներ են հանդիսանում աղազերծման կայանները¹⁸:

Իսրայելին բնական գազ հիմնականում մատակարարվում է իսրայելա-ամերիկյան համատեղ շահագործմանը հանձնված «Յամ Տետիս» հանքավայրից, որի պաշարները գնահատվում են մոտ 32 մլրդ մ³: Այն գրեթե անբողջությամբ վաճառված է եգիպտա-իսրայելական «East Mediterranean Gas» (EMG) ընկերությանը, որը, պայմանագրի համաձայն, սկսած 2008թ-ից պետք է 20 տարվա ընթացքում Իսրայելին մատակարարի մոտ 140 մլրդ մ³ բնական գազ:

Վերջին շրջանում նաև «Բրիթիշ փերոլիումը» հայտարարեց, որ բանակցություններ է վարում Գազայի ափից ոչ հեռու հայտնաբերված գազի հանքավայրից¹⁹ արտահանվող բնական գազը Իսրայելին վաճառելու վերաբերյալ, սակայն դեպքերի վերջին զարգացումները Գազայում խոչընդոտում են այս գործընթացին:

Ելնելով սեփական անվտանգության նկատառումներից՝ Իսրայելին անհրաժեշտ է դիվերսիֆիկացիայի ենթարկել էներգակիրների մատակարարումը: Այս համատեքստում ավելի հրատապ է դառնում ադրբեջանական և դազախական էներգակիրների մատակարարման հարցը:

¹⁷ Յ. Շագալը ներգաղթել է Իսրայել 1990 թ:

¹⁸ Սիրիայի և Իսրայելի միջև հավանական հաշտության կնքման դեպքում Գոլանի բարձունքները ջրային պաշարներով կարող են անցնել Սիրիայի տիրապետության տակ: Իսրայելն իր հերթին ջրային պաշարների համապատասխան ֆանակը ապահովելու նպատակով, նախաձեռնել է նոր աղազերծման կայանների կառուցում, որոնք որպես էներգակիր օգտագործելու են հիմնականում գազը:

¹⁹ Մոտավոր հաշվարկների համաձայն՝ հանքավայրը պարունակում է 40 մլրդ մ³ գազ:

Բացի վերը նշված համագործակցությունից էներգակիրների բնագավառում, Իսրայելը ՄԱՇԱՎ-ի շրջանակներում Ադրբեջանում իրականացնում է նաև կրթական, գյուղատնտեսական, մշակութային և տեղեկատվական տեխնոլոգիաներին վերաբերող ծրագրեր:

Կրթական ծրագրերի շրջանակում իրականացվում են ուսանողների, գիտնականների և բժիշկների փոխանակման ծրագրեր: Փոխանակման և վերապատրաստման ծրագրերում ներգրավված ադրբեջանցի ուսանողների հիմնական մասը մեկնում է Իսրայել ուսանելու բարձր տեխնոլոգիաներին առնչվող մասնագիտություններ: Ակտիվորեն գործում են երիտասարդական բարեկամության միությունները: 2006թ փետրվարի 16-ին Բաֆվի պետական համալսարանում տոնական հանդիսությամբ բացվեց երայերեն լեզվի բաժին:

Պետք է նկատի ունենալ, որ 5-10 տարի հետո այս վերապատրաստված մասնագետները համալրելու են ադրբեջանական էլիտայի շարքերը՝ հնարավորություն տալով Իսրայելին լուրջ դերակատարում ունենալ Ադրբեջանի ֆաղափական դաշտում²⁰:

Ընդհանրապես խոսելով վերջին շրջանում ակտիվացող ադրբեջանա-իսրայելական հարաբերությունների մասին՝ պետք է փաստել, որ դրանց հիմնական շարժիչ ուժը Բաֆվում Իսրայելի դեսպան Արթուր Լինֆն է: Նրա ջանքերի շնորհիվ բազմատեսակ են նաև մշակութային առնչությունները՝ կազմակերպվում են տարբեր երաժշտական և պարային խմբերի, գրողների փոխադարձ այցելություններ:

Ինչպես նշվեց, ՄԱՇԱՎ-ի շրջանակներում իրականացվում են նաև ծրագրեր գյուղատնտեսության բնագավառում, մասնավորապես՝ ադրբեջանական շուկայի հանդեպ հետաքրքրություն են ցուցաբերում իսրայելական աշխարհահռչակ Netafim, Tahal, Arbel, Fabren Gardens ընկերությունները, որոնք հայտնի են իրենց ձեռքբերումներով կաթիլային ոռոգման, պարարտանյութերի, պահածոյացման ու փաթեթավորման, ինչպես նաև ինժեներային կառույցների նախագծման և շինարարության և այլ բնագավառներում:

Իսրայելի ներդրումները ադրբեջանական գյուղատնտեսական սեկտորի մեջ թույլ են տալիս ենթադրել, որ Իսրայելը հեռանկարում այստեղ համագործակցության հնարավորություն է տեսնում և հավանական է, որ հետագայում ադրբեջանական գյուղատնտեսական ապրանքները կարող են կազմել Իսրայել ներկրվող տարեկան \$300մլն բանջարեղենի և մրգերի զգալի մասը: Այսօր Իսրայելում բավականին լայն սպառում ունի ադրբեջանական նոսան հյութը և տարատեսակ ջեմերը:

Հետաքրքիր է նշել նաև, որ իսրայելական կողմը գյուղատնտեսական ծրագրեր է իրականացնում հիմնականում այն շրջաններում, որտեղ առկա են հրեական համայնքներ, ինչն իր

²⁰ Կարելի է որոշ վերապահումներով պնդել, որ այս խումբը միշտ հակասությունների մեջ է լինելու իսլամական երկներում (Իրան, Եգիպտոս, Սիրիա, Սաուդյան Արաբիա և այլն) կրթություն ստացած էլիտայի սովոր գանգվածի հետ, որն իր հերթին կարող է ներքին անկայունության աղբյուր հանդիսանալ:

հերթին վերը նշվածի համատեքստում կարող է նպաստել այդ համայնքների տնտեսական վիճակի բարելավմանը:

Ադրբեջանի հեռահաղորդակցության շուկայում ներկայացված է նաև պատկառելի իսրայելական և հրեական կապիտալ: 2005թ. ընթացքում Ադրբեջանը ներկրել է \$237.6 մլն էլեկտրասարավորումներ (ներառյալ \$136.2 մլն հեռահաղորդակցության սարքեր, ինչպես նաև \$35 մլն համակարգիչ և համակարգչային սարավորումներ): Ներկրման նշանակալի մասնաբաժին են կազմում իսրայելական արտադրության սարավորումներն ու ծրագրային փաթեթները:

Պետք է նշել, որ Ադրբեջանի բջջային կապի առաջին օպերատորը 1994թ իսրայելական GTIB-ի և Ադրբեջանի կապի նախարարության կողմից հիմնադրված Bakcell ընկերությունն էր, որը 2004թ ամբողջությամբ սեփականաշնորհվել է իսրայելական GTIB-ի կողմից: Ադրբեջանի հեռահաղորդակցության շուկայում իր բաժանորդների թվով և մատուցած ծառայությունների ծավալներով Bakcell-ը զբաղեցնում է երկրորդ տեղը՝ զիջելով թուրքական Turkcell-ի տնօրինության տակ գտնվող Azercell-ին:

Իսրայելա-ադրբեջանական հարաբերությունները ընդգրկում են նաև համագործակցություն անվտանգության և ռազմական ոլորտներում: Այստեղ իր կարևոր դերակատարումն ունի Իսրայելի պաշտպանության նախարարի տեղակալի պաշտոնը զբաղեցնող և Ավոդա կուսակցությունից Կնեսետի անդամ էֆրայիմ Սենեհը: Նա իսրայելական պաշտոնյաներից առաջինն էր, որը դեռ 1993թ այցելեց Բաֆու և մեծ ներդրում ունեցավ երկու երկրների միջև բարի-դրացիական հարաբերությունների հաստատման գործում:

Դեռևս Ղարաբաղյան պատերազմի տարիներին Ադրբեջանին զենք և զինամթերք հիմնական մատակարարողների շարքում եղել է նաև Իսրայելը: Զինադադարից ի վեր ավելի են մեծացել Իսրայելի և Ադրբեջանի միջև ռազմական համագործակցության ծավալները: 2001թ. մամուլում հայտնվեցին հրապարակումներ, որոնց համաձայն՝ Ադրբեջանը պատրաստվում էր մոտ 100 «Մերկաբա» տեսակի տանկ և 30 ռազմական ինֆնաթիռ գնել իսրայելական կողմից: Այս տեղեկատվությունը հետագայում երկու կողմերն էլ պաշտոնապես հերքեցին: Սակայն 2004թ ադրբեջանական կողմին հաջողվեց մի շարք պայմանագրեր կնքել Թուրքիայում արտադրված իսրայելական զենք ու զինամթերք գնելու վերաբերյալ:

Երկու երկրների միջև համագործակցությունը ավելի սերտ է անվտանգության և հատուկ ծառայությունների բնագավառում, որի անհրաժեշտությունը բխում է ինչպես Իսրայելի, այնպես էլ Ադրբեջանի շահերից, եթե հաշվի առնենք Իրանի անմիջական հարևանությունը: Երկու երկրների միջև կնքված համաձայնագրով իսրայելական կողմը անհրաժեշտության պարագայում, օգտագործելով իր

հետախուզական ենթակառուցվածքները, պետք է տեղեկատվություն տրամադրի ադրբեջանական կողմին, ինչպես նաև վերապատրաստի ադրբեջանական հատուկ ծառայությունների աշխատակիցներին:

Միջպետական համաձայնագրի համաձայն՝ իսրայելական հատուկ ծառայությունները, մասնավորապես ՄՈՍԱԴ-ը, ապահովում են Ադրբեջանի նախագահի անվտանգությունն արտասահմանյան ուղևորությունների ժամանակ:

Զեչտված տեղեկությունների համաձայն՝ իսրայելական հետախուզությունը Իրանի և Ադրբեջանի սահմանին տեղադրել է գաղտնալսման կայաններ, որոնք ծածկում են Իրանի տարածքի զգալի մասը:

Իսրայելի և Ադրբեջանի միջև համագործակցությունը հիմնականում կառուցվում է էներգակիրների շահագործման շուրջ, իսկ մյուս ծրագրերը հիմնական ծրագրի ածանցյալներն են և ուղղված են ապահովելու այս ծրագրի հեռանկարային բնույթն ու անվտանգությունը: Փորձառու իսրայելական դիվանագետի ատկայությունը Բաֆվում ենթադրում է, որ ավելի են մեծանալու Իսրայելի և Ադրբեջանի միջև համագործակցության ծավալները բոլոր բնագավառներում և իսրայելա-հրեական կապիտալը ադրբեջանական ներքին շուկայում ավելի ազդեցիկ դեր է խաղալու: Երկրորդ մտահոգիչ հանգամանքն այն է, որ Իսրայելի ֆաղափական կյանքում նոր ուժի հավակնող, հիմնականում նախկին Խորհրդային Միությունից ներգաղթածներից կազմված «Մեր տունն Իսրայելն է» կուսակցության անդամները տարբեր կերպ ներգրավված են էներգակիրներով հարուստ ԱՊՀ երկրների հետ հարաբերություններում՝ այդ թվում նաև Ադրբեջանի հետ:

Ադրբեջանա-իսրայելական գործընկերային հարաբերությունների զարգացման հեռանկարը թելադրում է, որ Հայաստանը Ադրբեջանի հետ հարաբերություններում ստիպված է լինելու հաշվի նստել հրեական լոբբիի հետ: